

մը իր անդրանիկ որդւոյն զինուորական պարկը: Հեծեծանաց ձայները սիրտը կը խշխշցընէին. շոգեկառաց ճամբայ ելլելու ժամանակը, զինուորները կառքերէն դուրս կը նետուէին, մէկ վերջին անգամ մըն ալ իրենց ընտանեաց գըրկախառն բարեր տալու համար. և վերջապէս երբ սկսան ողջոյն շոգեկառը չուել, բոլոր տղայքը, լալու վշտալից աղաղակներով օդը կը թնդացընէին, մինչդեռ կանայք շեմերուն վրայ կը մարէին:

Հանտվէրի զինուորքը շատ աւելի բարեբաղդ են քան բուն բանակին զինուորները. որովհետեւ լանտվէրի զօրականք իրենց քսակը աղէկ լեցուն հետերնին կը տանին, ու իրենք զիրենք բնաւ բանէ մը չեն զրկեր. անանկ որ շատ անգամ իրենց պաշարի թոշակը և հացը աղքատ զինուորակցաց կը բաժնեն:

Հանտվէրի զինուորական զգեստը և զինուց հանդերձանքը՝ մի և նոյն է միւս բանակին զինուորաց զգեստուն և զինուց հետ. բաց 'ի սաղաւարտին խաչէն, որ միայն հասարակ զգեստուն զլխարկին ծոպքին մէջն կը կրեն:

Հանտվէրի հաւաքումը — միշտ 1866 տարւոյն ակնարկելով — իր ծիծաղելի կտորն ունեցաւ: Երբոր գնացին պարտուցը համար անգութ պարտատէրներէն բանտեալները արգելանոցէն ազատելու, այս արգելականները մեծաւ եռանդեամբ պատերազմին լուրը ընդունեցան:

Պէռլինի բանտի մը մէջ, մի և նոյն օրը տասնուչորս բանտարկելոց աղատութիւն տրուեցաւ: Ասոնք լանտվէրի զգեստը հագած, առաջին այցելութիւննին իրենց պարտատեարըրը ըրին: Զարմանալի դիպուածով մը ասոնցմէ մէկը, ունեցած բնակութեան տոմսակին համեմատ, իր պարտատիրոջ տունը գնաց բնակելու՝ որ զինքը բանտեր էր, և այն պարտատէրը հարկ եղաւ որ իր պարտապանին թէ բնակութեան տեղ տայ, և թէ անունը հոգայ:

Ամեն հնարք կը բանեցընեն, լանտվէրի ծառայութենէ ազատելու համար:

աղերսագիրք հարկւրաւոր կը թափին թագաւորին առջև, բայց ինքը անողոքելի է: Այսպէս մեր վերը ըսած Գոլտիոյ լուծալափոխը, որ բրուսիական գանձին գլխաւորներէն մէկն է, գնաց Պէռլին յուսալով որ իբր շնորհ ընդունի որ իր որդւոցմէ մէկը տունը մնայ. այն միջոցին արքայորդին իր հօրը սենեակն էր. թագաւորը մտիկ ըրաւ լուծալափոխին. վերջը,

— « Սիրելի Պարոն, ըսաւ, կը ցաւիմ որ խնդիրքդ չեմ կրնար կատարել »:

Եւ որովհետեւ լուծալափոխը շատ կ'աղաչէր.

— « Պարոն, ըսաւ, ցուցընելով իր գահուն ժառանգը, մէկ որդի մը միայն ունիմ, և նոյն ինքն ալ բանակ պիտի երթայ »:

ՆԻԷԼ ՄԱՐԱԶԱՅՏ

Անցած տարւոյն Օգոստոս ամսուն մէջ այս մարաշախտիս համառօտ կենսագրութիւնը գրինք. հիմա կը գնենք ընթերցողաց առջին անոր կենդանագիր պատկերը:

Նիէլ մարաշախտիս մահուամբ Գաղղիոյ պատերազմի հակամէտ կողմը իր ամենէն զօրաւոր բազուկը կորսնցուցեր էր, և թերեւ իր զլխաւորը: Յայտնի է որ մինչև 1868ին աշունէն, այս մարաշախտս չէր ուզեր զարնան սպասել Բրուսիոյ դէմ պատերազմ հրատարակելու համար: Բանակը կարգաւորած ըլլալով, անհամբեր կ'երևար զայն գործողութեան մոցընելու, որպէս զի տկարացընէ այն նոր և զարհուրելի տէրութիւնը՝ որ Սատովայի մէջ արմատը ձգեր էր: Այս բանս կը մեկնէ այն տաղնապողական գործունէութիւնը՝ որով իր երկարաձիգ պաշտաման ժամանակը ինք զինքը մաշեցուց, որպէս զի քիչ ժամանակուան մէջ իր ձեռնարկած զինուորական կարգաւորութիւնը գլուխ հանէ:

1867ին Յունուարի 20ին եղաւ որ կայ



ՆԻԷԼ ՄԱՐԱԶԱՆԻՑ

սրը զինքը պատերազմի պաշտօնեայ ա-
նուանեց: Պաշտօնը սկսելով, ինչպէս
խորհրդարանին մէջ ինք իր բերնովը
զուրցեց, բանակը ամենախեղճ վիճակի
մէջ գտաւ, զինարաններն իսկ սպա-
ռած: Այն ահագին ծախքերը որ հարկ
եղեր էր ընել, Մեքսիքոյի դժբաղդ ար-
շաւանդին համար, զօրքերն և պատե-
րազմի պաշարը փոխադրելու համար,
ինչպէս նաև 30,000 զօրք այն հեռաւոր
աշխարհին մէջ պահելու համար, բըռ-
նադատեր էին Ռանտոն մարաշխտը
բանակին զօրաց թիւը նուազեցնելու,
զօրաց կէսը տուն դարձնելու, ձիաւո-
րաց և թնդանօթից համար նոր ձիեր
չիգնելու, և զինարանաց զէնքերն ու գոր-
ծիները, որ ալ անգործածելի եղեր էին,
չինորոգելու. անանկ որ Նիէլ մարաշխտ
տին ըսածին նայելով, Գաղղիան նաև
այս պատճառիս համար, խոհեմաբար
հարկ սեպեց չէզոք կենալու, այն մեծ
պատերազմին մէջ՝ որ 1866ին երկու
մեծ Գերմանացի տէրութեանց մէջ ծա-
ղեցաւ:

Նիէլին առաջին խնամքն եղաւ կար-
գադրել այդպիսի վիճակ մը, բոլոր բա-
նակը նոր կատարելագործեալ զէնքե-
րով զինել, անոր թիւը 750,000ի հա-
նել, բաց 'ի 500,000 ազգային շարժա-
կան զօրքերէն: Տասնեութ ամսուան մէջ
Նիէլ մարաշխտը 1,200,000 հրացան
շասրոյ շինել տուաւ, նորոգեց ու զի-
նեց բերդերը, զինարանները լիացուց
պատրաստութեամբ: Այս կերպով կայ-
սեր քով մեծ համարմունք ու սէր ստա-
ցաւ, որ թէպէտ միշտ խաղաղութիւն
կը խոստանար ամեն առթիւն ձեռք տա-
լուն, այլ միւս կողմանէ ուրախ էր իր
հաւատարիմ մարաշխտին ըրած ջա-
նիցը:

Այս ջանից մէջ էր երբ մահը հասաւ
այս կտրիճ մարաշխտին. բայց գոնէ
բարեբաղդ եղաւ իր լիակատար իշխա-
նութեանը մէջ մեռնելու, և գոհացեալ
սրտով 'ի կատար տարած ըլլալու այն
ձեռնարկութիւնը, որ հաւանականա-
բար ինքը ոչ իբր նպատակ կը դիտէր՝
այլ իբր միջոց: Եւ այդպէս ալ ազատե-

ցաւ մահուամբ այն պատրանքներէն,
որ իր մտածութեանց կատարուելուն
մէջ անշուշտ իրեն կը մնային:

ՀԻՆԳ ՇԱՐԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՁ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տէս երես 247)

ԳԼՈՒԽ ԺԳ.

Օղուն փոխուիր. — Գեներտիկն չերմր. —
Տրքորիկն դեղր. — Յամաքայիկն ձաւբոր-
դորիւնր. — Խմենձէ առազանր. — Ռա-
պէնօ լեւր. — Վեց հազար ոտք բարձրա-
րիւնր. — Յորեկոսան դադար մը:

Գիշերը հանգստութեամբ անցաւ.
սակայն շաբաթ առաւօտը փէննրտի
արթննալով խոնջ զգաց ինք զինքը ու
վրան ջերմի դող մը եկաւ: Օղը կը փո-
խուէր, երկինքը թանձր ամպերով դի-
զուելով կարծես թէ նոր ջրհեղեղի մը
համար կը պատրաստուէր: Տխուր եր-
կիր մըն է Յունկոմէրոն, ուր շարունա-
կաբար կ'անձրևէ, 'ի բաց առնելով,
թերևս, յունուար ամսուն մէջ, տաս-
նուհինգ օրուան չափ:

Շատ չիգնաց սաստիկ անձրև մը բըռ-
նեց ճանապարհորդները. իրենց ստորերը
ճամբաները նիշլլաւներէ ընդհատած,
որ տեսակ մը առժամանակեայ հեղեղ-
ներ են, անգնալի էին, թէպէտ միւս
կողմանէ ալ փշուտ թուփերով և հըս-
կայակերպ կռուարոյսերով խափա-
նուած էին: Յայտնի կը զգային այն
ծծմբաւորեալ ջրածնի գոլորշիները ո-
րոնց վրայ կը խօսի Պըրդըն գնդապետը:

— Ըստ Պըրդընի, ըսաւ տղդորը, և
իրաւունք ունի, կարծես թէ իւրաքան-
չիւր թփուտին ետեւը դիակ մը ծած-
կուած է:

— Շատ գէշ երկիր, պատասխանեց
ճոյ, և կարծեմ որ պարոն փէննրտի գի-
շերը հոս անցուցած ըլլալուն պատճա-
ռաւ՝ ինք զինքը աղէկ չիզգար: